Որ լըցեր է զպատկերս քոյ լուսով ի լին,
Եւ զարմանք է ցուցեր ամէն հողածնին։

Վարդ ես դու վայելուչ կանաչ տերեւով,
125 Եւ լի խմաստութեամբ ես որպէս ըզծով,
Դու բազում խաւսեցար քաղցրութեամբ սիրով,
Եւ գովասանութեամբ առ իս նամակով։

Տիրես ամենայն ծաղկանցըն բոլոր,
Բազմիս ի գահոյս որպէս թագաւոր,
130 Արա զիս արժանի քեզ ծառայ զինուոր
Որ ես եմ գեղեցիկ թրուչուն թեւաւոր։

Բամք թռչունք երկնիցըն քեզ հասրաթ է,
Սիրով ինձ ասացին թէ զվարդըն գովէ,
Եթէ մէկ պահ լըռես, նայ քեզ գունահ է,
135 Որ հանապազ յառջեւդ քան զնահ ի վառ է։

Ցայտե լոյսըն թափանց ի քոյին թերթէ,
Որպէս բոցառագայթս ի յարեգակնէ,
Եւ բնբշոյլ քոյ շողիտ ի սիրոս իմ ծագէ,
Եւ կատարեալ սիրով ի քեզ հաստատէ։

140 Իւղ ես մեծագին որպէս պալասան,
Եւ խորհուրդ արքային, ով վարդ պատուական,
Դու ես նոր առաւաւտ եւ գուշակ գարնան,
Եւ խընդութիւն բերես ամենայն մարդկան։

---

122. Հ. զպատկերդ. — 123. Հ. ցուցեր։ — 124. Հ. կանանչ։ — 125. Հ. լեռնէ ես։ — 127. Հ. գովասանութիւն առնես։ — 128. Հ. Տէր ես։ — 129. Հ. բազմես։ — 130. Հ. արայ. զինուոր։ — 131. Հ. որ ես դու...։ — 133. Հ. զվարթն։ — 184. Հ. նա։ — 135. Հ. առջեւդ։ — 138. Հ. եւ ի նշոյլ։ — 139. Հ. շողիդ ի սիրտ իմ։ — 140. Հ. իւղ ես։ — 141. Հ. վարթ պատուական։